ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հունվարի 20-ին հեռակա ուսուցման համակարգի մի խումբ ուսանողների հետ հանդիպում է ունեցել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Վ. Յարամիշյանը ներկաների հետ քննարկել է հեռակա ուսուցման գործընթացի, ուսանողների իրավունքների և պարտականությունների, նրանց հնարավորությունների և արտոնությունների, ուսանողական ինքնավար կառույցներին անդամակցելու, համալսարանի կառավարմանը մասնակցելու, էլեկտրոնային հասցեների տրամադրման, համալսարանական կյանքի և այլնի հետ կապված մի շարք հարցեր:

Առաջնորդվելով ուսանողակենտրոն կրթության սկզբունքով և կարևորելով հեռակա ուսուցման համակարգի ուսանողների դերը համալսարանի զարգացման գործում՝ Վ. Յարամիշյանը կոչ է արել անմասն չմնալու համալսարանում տեղի ունեցող գործընթացներին և դրանց անմիջական մասնակիցը լինելու: Պրոռեկտորը այն կարծիքն է հայտնել, որ առանց հետադարձ կապի և բաց զրույցի հնարավոր չէ լուծում տալ ուսանողին հուզող խնդիրներին, քանի որ «ուսանողների առաջարկությունները ու կարծիքները միշտ էլ բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են»:

Ուսանողական նախաձեռնություններին ակտիվորեն մասնակցելու, համալսարանական միջավայրի լիիրավ ներկայացուցիչներ դառնալու և համալսարանի հնարավորություններն ի նպաստ ինքնազարգացմանն օգտագործելու կոչ արեցին դեկանները, ՈՒՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի պետ Նարինե Աբրահամյանը, ՈՒԽ նախագահ Արթուր Ամիրջանյանը:

Հանդիպման վերջում ուսանողները լրացրել են հարցաթերթիկներ՝ գնահատելով համալսարանի ուսուցման կազմակերպման որակը, գիտելիքների ստուգման համակարգը, ստացած գիտելիքներից բավարարվածությունը և այլն:

ՀՅՈՒԼՎԱՔԻ

Հունվարի 28-ին հայոց բանակի կազմավորման կապակցությամբ ԱրՊՀ-ում կազմակերպվել էր արիության դաս, որը վարում էր ԼՂՀ ՊԲ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժնի պետ, գնդապետ Նորայր Մկրտչյանը:

Տոն օրերի կապակցությամբ ավանդական դարձած հանդիպումների նպատակը, ինչպես նշել է, Ն. Մկրտչյանը, բանակաշինության և բանակի առջև դրված խնդիրների վերաբերյալ անկեղծ զրույցներն են երիտասարդության հետ:

Ն. Մկրտչյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց հայոց բանակի կազմավորման անհրաժեշտության, դրա ստեղծման պատմական հիմքերին և ներկայիս դերակատարության վրա:

Հայոց բանակի ստեղծումն ու կազմավորումը անքակտելիորեն կապված են հայոց պետականության ստեղծման հետ, քանի որ պետություն և բանակ հասկացությունները պայմանավորում են միմյանց և մեկի գոյությունն առանց մյուսի դժվար է պատկերացնել: Այս երկուսի սկիզբը մեր դեպքում եղավ 1988 թվականի փետրվարը:

Ն. Մկրտչյանը ներկայացրել է բանակի կազմավորման և զարգացման ճանապարհը՝ այն բաժանելով երեք փուլի՝ 1988-1992թթ., երբ դարաբաղա-ադրբեջանական հարաբերությունների ծայրաստիճան լարման կիզակետում դրվեց բանակ ունենալու անհրաժեշտությունը, 1992-1994թթ., երբ հայ ժողովուրդը պայքարում էր Ղարաբաղի անկախության և ազատության համար, 1994 թվականից առայսօր, երբ աշխատանքներ են իրականացվում բանակաշինության կայուն զարգացման, զինտեխնիկայի ձեռքբերման, այսինքն՝ կայացած և մարտունակ զինված ուժեր ունենալու ուղղությամբ:

Բանախոսության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև վերջին շրջանում հակառակորդի կողմից սահմանի ողջ երկայնքով ձեռնարկված հետախուզադիվերսիոն գործողություններին, դրանց կանխարգելմանն ու տրված հակահարվածներին, Ադրբեջանի հակահայկական քարոզչությանն ու ԵԽԽՎ նիստում հակահայկական երկու բանաձևերից մեկի ընդունմանը:

«Սահմանների վերաձևման յուրաքանչյուր փորձի կանխիչը ոչ թե միջազգային իրավունքի նորմերն են և կամ համապատասխան կառույցները, այլև մեր ժողովրդի ներուժի ճիշտ օգտագործումը»,- նշել է բանախոսը:

Վերջում ներկաների միջև ծավալվել է քննարկում:

ՏՈՆԴ ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր, ՊԱՇՏՊԱ՛Ն ՀԱՅՐԵՆՅԱՑ

Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով բանակ-հասարակություն կապն ու դրա ամրապնդումը՝ Արցախի պետական համալսարանի ղեկավարությունը հաճախակի է նախաձեռնում համատեղ միջոցառումներ, հանդիպումներ, դաս-դասախոսություններ, զրույցներ: Այս կապի հիմքում ունենալով «Հզոր ենք միասին» կարգախոսը՝ ԱրՊՀ-ականներն Հայրենյաց պաշտպանի օրը ԼՂՀ ՊԲ զորամասերից մեկում հանդես եկան համերգային համատեղ ծրագրով:

1918թ. փետրվարի 23-ին Կարմիր գվարդիայի ջոկատայինների առաջին հաղթանակը կայսերական Գերմանիայի դեմ հիմք հանդիսացավ «Կարմիր բանակի» ստեղծման, որից չորս տարի անց՝ 1922 թվականին՝ նույն օրը պաշտոնապես հայտարարվեց Կարմիր բանակի օր: Ավելի ուշ ԽՍՀՄ-ում փետրվարի 23-ն սկսեցին նշել որպես Խորհրդային բանակի և ռազմածովային նավատորմի համազգային օր: Խորհրդային միության փլուզումից հետո տոնը ստացավ նոր բովանդակություն. վերանվանվեց և կոչվեց Հայրենիքի պաշտպանի օր: Ոմանց համար փետրվարի 23-ը, այնուամենայնիվ, բոլոր այն տղամարդկանց օրն է, ովքեր ծառայում կամ ծառայել են բանակում կամ այլ ուժային կառուցներում:

Միջոցառման հեղինակները հայրենիքի մերօրյա պաշտպաններին ներկայացել էին ասմունքի, պարային և երաժշտական համարներով՝ շնորհավորելու, հերթական անգամ քաջալերելու և հավաստիացնելու, որ հասարակությունը միշտ զինվորի հետ է, զինվորի կողքին: Զինվորականները հանդիսատեսի դերում չէին միայն. նրանց ոգևորությունն այնքան մեծ էր, որ չնախատեսված ելույթներ ևս եղան՝ հայրենասիրական երգեր, պարեր և այլն:

Այս կերպ համալսարանականները նաև իրենց երախտագիտությունը հայտնեցին փխրուն խաղաղությունը ապահովելու համար, իսկ զինվորները հերթական անգամ վստահեցրին, որ հայրենիքի սահմաններն անառիկ պահելու սուրբ գործն ապահով ձեռքերում է:

«ԳՏԻՐ ՔՈ ԱՊԱԳԱՆ»

«Արցախի երիտասարդության զարգացման կենտրոնն հասարակական կազմակերպությունը փետրվարի 23-ին ԱրՊՀ մի խումբ ուսանողների համար կազմակերպել էր դասընթաց՝ «Գտիր քո ապագան» խորագրով:

«Արցախի երիտասարդների զարգացման կենտրոնը», որը զբաղվում է երիտասարդների կրթադաստիարակչական գործունեությամբ, այս անգամ փորձել է երիտասարդությանը ներգրավել կամավորական աշխատանքների մեջ: Այս նպատակով կազմակերպության ղեկավարությունը Արցախում կամավորական աշխատանք իրականացնող գերմանացի երիտասարդի միջոցով ներկայացրել է կամավորական աշխատանքների էությունը, սկզբունքն ու նպատակը հայրենիքում և հայրենիքից դուրս:

«Կամավորների գործունեությունն ունի բավականին լայն շրջանակ, որն ընդգրկում է փոխօգնության և ինքնօգնության ավանդական ձևերը, քաղաքացիական մասնակցության զանազան այլ ձևեր, որոնք իրականացվում են ի շահ հասարակության լայն շերտերի և, իհարկե, ինքնական»,- նշել է կազմակերպության ղեկավար Ս. Պետրոսյանը:

ԾՈՎԻՑ ԾՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՐԱԶԱՆՔՈՎ

Անկախության 20 տարիների ընթացքում արտասովոր ուժով, խելքով, հնարամտությամբ կամ այլ հատկություններով աչքի ընկած հայերի մասին այսուհետև հնարավոր է տեղեկություններ իմանալ հայկական դյուցազնագրքի միջոցով:

Գինեսի ռեկորդների գիրքը հիշեցնող «Դյուցազնագրքում» ներկայացված են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ամենահայտնի նվաճումները: Այդ նվաճումների շարքը համալրում է ԱրՊՀ աշխարհագրության ամբիոնի դասախոս Ռաֆիկ Սարգսյանի աշխատանքը:

Ռ. Սարգսյանին, ընկերների և համախոհների շնորհիվ, հաջողվել է կյանքի կոչել 160սմ x135սմ չափսի Հայկական լեռնաշխարհի ռելիեֆ-քարտեզ կազմելու գաղափարը:

«Յուրաքանչյուր զտարյուն հայի ուղեղի մի կետում «նստած է» ծովից ծով Հայաստանի կարոտը և այն ամեն մեկս յուրովի ենք արտահայտում: Իմ դեպքում այդ կարոտը ծնունդ տվեց մի գաղափարի, որի իրականացման բուն նպատակը ոչ այնքան դյուցազունների շարքին դասվելն էր, որքան ազգանպաստ գործ կատարելը»,- այսպես է Ռ. Սարգսյանը մեկնաբանում հայկական լեռնաշխարհի ռելիեֆ-քարտեզի ստեղծումը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ
Հիմնադիր՝
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆ ՊՈԱԿ

Խմբագիր՝
Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մեր հասցեն՝
Մ. Գոշի 5: Հեռ՝. (047) 94-04-91
Տպագրվում է «ՍՈՆԱ» տպագրատանը
Տպաքանակ՝ 400

2011 թվականից գործում է ԱրՊՀ-ի եռալեզու կայքը:
Իմացի՛ր համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am